ԿՈՎԿԱՍ ԵՒ ԱՐԱՐԱՏ

Սինայն ի քեզ՝ լեառըն Կովկաս,
Թէ մեծ Թափոր լինել պանծաս,
Բարէ՜, որպէս բարձրիզլուխ
Գերբնակա՜ն դու գուրգուռաս։
Կարծես, ամպրոպք՝ ըստորոտիդ՝
Երկրպագուք են վեհ յարկիդ.
Պարք աստեղաց բոլոր ի խումբ
Քեւ բոլորին ի լոյս յար միշտ։
Ճաճանչ շողշող արեգական
Ի քէ՜ն բղխի,—ո՜հ, տեսարան
Քանի՜ սիրուն, քանի՜ վըսեմ՝
Թո՛ղ զարմանան աշխարհ համայն։

* * *

Բայց մի՛ այդքան դու բարձրանար,
Մի՛ յաղթեսցէ քեզ այն սին փառք,
Մի՛ անընդման և մեծամիտ
Արկցես ըզքեզ յերկնից կամար։
Են քան ըզքեզ վըսեմապանծ
Լերինք բարձունք և ամպամած.
Այո՛ ամպրոպք խորհրդական
Աստեղք զայնս ունին պատած։
Արեգական լոյս ճառագայթ
Ազան քան քեզ՝ մինչ պսակաղարդ
Հիւսէ զնոսա շուրջանակի,
Դու ի խոր կաս սրգոյ խաւար։
Որոց և մինն՝ ո՞չ ապաքէն՝
Մեծ քան ըզքեզ փայլի աստէն՝
Այս Արարատ՝ որ Մարդկութեան
Է որոբան, աստ և Տապան....։
Նուիրական տեղի փառաց,
Զոր ոչք տեսին հանուր Նոյեանց,
Որում յակճիռս կան տիեզերք
Տեսեալ զգաղտնիս բնութեան դիպաց։
Նուիրակա՜ն և Հայկազանց
Ի սիրտս տածէ սէր բազմաբազձ.
Որոց միշտ յար քան ըզԿովկասդ՝
Է անձկալի այս Արարատ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՑ—ԷՋԳՈՒԹԻՒՆ

Բոլոր նիւթաւոր գոյացութեանց մէջ աբբայական շքեղ պատուանունը կսեփհականէ մարդն. վասն զի [illegible]կիշխէ նա իբրև տէր միւս գոյութեանց վերայ, [illegible]առնու ի կիր և կընէ զայնս՝ դիտելով նոցա իւրաքանչիւրոց տարբը, նոցա ամենայն մի յատկութիւններն և պիտանաւորութիւններն բընութեան մէջ. մարդոյ բարձր նշանակութեան արժանաւորութիւնը կապացուցանեն նաև դարերի շրջաններն, որոց մէջ ամենայն մի մարդկային մեծագործութեանց հետքը խորհրդաւոր պատկերներ են, ամենայն մի հետք մարդոց՝ բնութեան վերայ գործած ազդութեան և ներգործութեան կանգուն կոթողներ և անջնջելի յիշատակարաններ կներկայացնեն ապագայ սերնդոց։ Ապա աւելի ևս նշանաւոր է մարդկութիւն, որոյ անբաժան մասունքն կկազմեն համբէն մարդիկ, և որոյ առաջին պարունակութիւնն է մարդ անուան ճշգրիտ և սրբազան յատկութեանց միաւորութիւն։ Եթէ անբաժան և անլուծանելի բաղադրութիւն ունի այս միաւորութիւն, ապա և ամենայն մի վայրկեան մարդկութիւնն աստիճանաբար և անսայթաք կատարելագործութեան սուրբ տաճարների մարմարիոնեայ աստիճաններից ի վեր ի վեր թեւակոխելու յոյս կունենայ, որոնք պիտի առաջնորդեն նորան դէպ ի անվերջ և անդադարդ երջանկութեան հրաշալի պարտէզը, և մարդկութիւն կընդունէ այս յուսոյ իրագործութիւնը, եթէ ամենայն ոք ըստ իւր կոչման և կարեաց գործունէութեան լայնադիր ասպարէզի մէջ գուն գործէ դէպ ի յառաջ քայլեր արձակելու։ Մարդկութեան որոշ որոշ մասունք կբաղկացնեն նաև իւրաքանչիւր ազգութիւն, որոնք և կորոշուին միմեանցից լեզուի և կրօնի տարբերութեամբ։ Ամենայն մի անհատ եթէ կճանաչէ զինքն՝ կճանաչէ զԱզգութիւն, եթէ կճանաչէ Ազգութիւն՝ կճանաչէ և մարդկութեան իրև ի մի ամբողջու-

թիւնն։ Որովհետև Ազգութիւնն է մարդկութեան մի մասն, ապա և մարդկութեան Նշանաւորութիւնն կամփոփուի իւրաքանչիւր Ազգութեան վերայ մասնօրէն, և այս Նշանաւորութիւնն ևս կորզնուի նորա լեզուի, կրօնի և քաղաքական կեանքի մէջ։ — Նշանաւո՛ր է և Հայ-Ազգութիւնն, որոյ սկիզբն պատիւ վերբերից մարդկութեան, և դիւցազնին Հայկայ աստուածահաճոյ յաղթութեան դրօշակով հաստատեց պարծանօք իւր հիմն։ Նշանաւո՛ր է Հայութիւնն այնու, որ կպարծի մինչ ցարդ դէմոյի նման իւր ժամանակակից ազգերի առջև, վասն զի դարերի յորդահոս հեղեղների հետ պատերազմեցաւ Հայաստան, նոյա լեռնաձև և կատաղի ալեաց ուժգին բաղխմանը տոկաց նա՝ իւր անվեհեր կուրծքը՝ իբրև Հեփեստոսեան սարակուռ վահան պարզելով նոցա ընդդէմ․ տեսաւ այո՛ թէև Հայաստան իւր հարազատներից դաւաճաններ, ոսոխներ և աւերիչներ․ Լէնկթէմուրների անխիղճ սրածութեանց թատրօն ձևացաւ նա, ոռոգեցան թէև նորա տխուր դաշտերը իւր որդւոց անմեղ արիւններով, որոց հոսանքից կարմրեցան սրընթաց և վճիտ գետերն, և վերջապէս անթիւ թշուառութեանց դառն բաժակներ ըմպեց թէև նա, որոց յիշատակը ամենայն մի զգայուն սրտի համար սայրասուր սլաքներ են և արտասուաց հոսման առիթներ, սակայն այս ամենին արիաբար յաղթելով՝ պահեց Հայաստան իւր սուրբ կրօնը, գրկեց նա գգուանօք իւր երկնանուէր լեզուն, որով և կպարծի միշտ Հայութիւնն։ — Օ՜ն ուրեմն մեք Հայաստանի հարազատներս, սիրենք հոգւով մեր սուրբ Ազգութիւնն, որոյ բաղկացութեան գլխաւոր և անբաժան տարրքներն են մեր սուրբ Կրօնը և Լեզուն, զգուշանանք յօտարոտի նորասիրութեանց կերպարանափոխ և պատրուակեալ ի գեղեցկութեանց որոնք կ՚կախարդեն մեր զգայութիւնքն և կհրապուրեն զմեզ մոռացութեան, կամ լաւ ևս ասել՝ ուրացութեան տեղլի անդնդոց մէջ թաղելու զԱզգութիւն։ Փոխանակ Վասակներ՝ Մեհրուժաններ և Վեստ Սարգիսներ դառնալու Հայութեան համար՝ աշխատենք կրելու մեզ վերայ զԱզգութիւն սիրող և պաշտպանող հարազատ որդւոց արժանաւոր և պանծալի անուններ՝ քաջին Արամայ և սրբոյն Վարդանայ Մամիկոնէի յիշատակաց արժանի անմահ օրինակներն ի խոր տպաւորելով մեր հոգւոց մէջ։ — Ջանանք պիտանի և պատուական անդամ դառնալու մեր Ազգութեան մարմնական կազմուածքին, որ մարդկութեան մէջ մի փառաւոր դեր կզբաւէ, և սրբազնագոյն պարտաւորութիւն կ՚կնքէ իւրաքանչիւր Հայի վերայ՝ ի բոլոր սրտէ զինքն սիրելու և օգնելու, և ո՛չ թէ խոպանացեալ և անպտղատու ծառի նման լսելու այն սարսափելի ձայնը, թէ „հատէ՛ք զդա, և արկէ՛ք ի հուր․ ընդէ՞ր զերկիրդ խափանէ„։ Յաւալի՜ այո՛, այն անձը որ լոկ Հայ անուն կրելով իւր վերայ՝ սառնարիւն կլինի դէպ ի այն Ազգութիւնը․ Հայութեան համար կլինի այնպիսին այն՝ ինչ որ է կտաւագործը ակնագործութեան արհեստի մէջ․ զուրկ կլինի նա ինքնածանօթութեան առարկայի ամենակարևոր սահմանից․ Ազգութեան իրական բովանդակութիւնը պիտո՛յ է հասկանալ և ընդգրկէ իւրաքանչիւր Հայ, որով առ Ազգութիւն, հետևաբար և առ մարդկութիւն ունեցած սեպուհ և սրբազան պարտիքը վճարած գոլով՝ իրապէս Հայ՝ և հետևաբար իսկապէս մարդ անուան բարձր կոչման արժանաւորութիւնը կզրոշմէ պարծանօք իւր ճակատի վերայ, և ահա՛ Հայ-Ազգութիւնն ևս մթութեան թանձր ստուերի և աննշանութեան փոշւոյ դէմ քցելով արիաբար՝ իւր դարաւոր պարծանաց շքեղութիւնն մարդկութեան ընդարձակ հորիզոնի վերայ իբրև ծիածան փայլեցնելու կ՚յաջողի, և ժամանակի անհրաժեշտ պահանջների վերայ անտարբեր ակնարկ չ՚ձգելով՝ մարդկային լուսաւորութեան և յառաջադիմութեան ասպարէզին մէջ դէպ ի յառաջ քայլեր փոխելու ուժ կ՚ստանայ, կ՚զարգանայ նա արագ կերպով բարոյապէս, մտաւորապէս և նիւթապէս, և այս երջանկութեան անաղօտ լապտերով պիտի լուսաւորի նա միշտ, պահապան հրեշտակ ունելով իւր վերայ Աշխատութեան, Սիրոյ և Միաբանութեան չքնաղ ոգին, որ իբրև անմոլար ուղեցոյց և հմուտ ղեկավար պիտի հասուցանէ նորան դէպ ի ցանկալի նաւահանգիստը․ այդպէս և գարնան չքնաղատիպ պատկերն կ՚դրոշմուի Հայ — Ազգութեան պարտէզի վերայ, և նորայ գծագրութիւնն

ուելի եւ հրաշալի պիտի ներկայանայ աչաց բնութեան ամենայն մի գեղեցիկ և զրաւիչ երեւոյթներից, և մարդկութիւնն անուշահամ պտուղներ պիտի յուսայ այն պարտեզէն, որոյ մէջ հարկաւ իւրաքանչիւր Հայ մշակութեան քաղցր պարտուց խոստովանելի արդիւնքը ճանաչելով պարտ է գործել իբրև ժիր. և հաւատարիմ մշակ մեր Ազգութեան պարտեզում, անշուշտ լինելով՝ թէ իւր վարձուց փոխարէնն պիտի ընդունէ նոյն պարտեզի բարիքներէն, և պատմութեան էջերուն մէջ բարի Հայու անուն թողնելով՝ օրհնութեան արցունքներ պիտի ընդունէ իւր ցուրտ դամբանի վերայ. Թող զարդ և Հայութեան բաղդն եւս դարաւոր թմրութեան փոշւոյ մէջէն վերականգնելով արշալոյս պիտի տեսնէ ճաճանչած իւր վերայ, որոյ առաջին պայմանն է իւր գլխաւոր տարերքն այն է Կրօնի սրբազնութեան յարգն և պատուական լեզուի մշակութեան հարազատ պատիւն ուրիշ սոցա նպաստող միջոցների հետ, որոց վերայ իբրև ի հաստատուն նեցուկ պիտի յենու ամրապէս մեր Ազգութիւնն, որով և օրհնութեան բարերար անձրևներ պիտի իջնեն Ազգութեան պարտիզի վերայ կենսագործ և քաղցրահամ պտուղներ վերածնելու յոյս պարգևելով.

Յովհաննէս Մասեհեանց.

ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍՆ ԻՄ

Ո՛հ, որ ի քոյդ անուշակ
Յանմահ անուն՝ Հայաստան,
Սրտիս ձօնեմ ջերմ անձուկ
Ընդ մեղմասիւքն գարնան.

Յանուանդ, որով կենդանի
Եմ՝ և կացից մինչ ցմահ,
Եւ ցյետին ոյժ սրտիս
Հեգել զանունդ Հայրենի.

Եւ քոյդ տխմար տխրադէմ՝
Սեղմել յիմ կուրծ ուխտ է իմ.
Քոյդ և զանուն ոսկեզիր
Անջինջ դրոշմել յիմ ի սիրտ.

Ո՜հ, և անունդ հովանի
Եղե՞ յաւէտ յիմ վերայ՝
Շնչել զօղըդ կենսաձիր,
Եւ քեւ ցնծալ Տուն Հայկայ.

Դեռ ի քնար վշտալար
Հնչե՞ս զանունս Դիւցազանց,
Որք ի քո քաղցըր ի սէր
Զանձինս զոհել ոչ պակեան.

Եւ սուրբ անուանդ արժանի
Զանուն թողեալ յաշխարհի,
Ի կեանս ի մահ միշտ ազատ
Մտին ի ծոց տապանի.

Ի ծով լըղալ արտասուաց՝
Տաս աչացդ քաղցր հայեաց,
Յորոց արտօսր ցանդ ի թոր
Զօնես նոցին սուրբ շիրմաց.

Բա՛ւ է որքան տխրութեան
Դեգերեցար ի մրմունջ,
Ի քո աչա՛ գութն երկնից
Կնքէ զբաղդ ի ճակատ.

Եւ ծաղկազարդ նոր գարուն՝
Զերդ ծիածան գոյնզգոյն
Զվերամբքդ հովասուն
Սփռէ մանեակս ոսկեզոյն.

Որ իբր զեթերն աստղաձեմ՝
Անխախտիղ ի քոյդ ծոց,
Ծագէ զփայլ գեղաւոր
Ծաղկանց ի զարդ բիւրաւոր.

Քաղցրաքնար հնչելով՝
Սոխակն ի թուփ վարդենոյն,
Սեթևեթէ յիւր նուագ
Զկուսաթոյրդ գարուն.

Արդ քեզ համբոյր Հայրենիք
Կրկնեմ երկիր Հայաստան.
Ի քոյդ անուն խնկելի, ո՜հ,
Ո՛հ, մաղթեմ զիմն կնքել կեան.

Ստեփաննոս Որբունեան Հայրանէ